

[illegible]

ՄԹԵՂԸ ՄԻՔԱՆԿՈՒԹԱՅ ԶԱՎՏԱԳՆԸ-
ԼՐԻ ԵՕՂԱՀԱՆՏԱԹ ԲՁՐՈՒԹԻՒՆ ՄՐ.
ԳՐԻԽԱՆԸՆ քիթապը ախքքեանն,
այս վէ ստիր քիթ ապշարատ:

ցին օտարազգիք : Չեմք կորող չխոս-
տովանել մեր ազգի այն յառկութիւն-
ն որ նա չէ կարողանում ճանաչել
մարդոց իւրեանց կենդանութեան ժա-
մանակ, գնահատել նոցա, ևս և ուղ-
ղել նոցա գործունէութիւնը առ այն՝
որ լցուցին ազգի կորիքըն . այլ
ընդհակառակն՝ միշտ անբաւական
են, միշտ գտնուում են՝ թէ ու-
սումնական չունինք, գործունէութե-
ամբ չունինք, ևն. ևն., իսկ եղած
ժամանակը՝ ճանաչել չեն կամենում,
եւ ահա, ով է այժմ պ. Էմինին
պատուողը, ով է նորա յորեւեանը
տանողը-օտարազգիք . . .

Այո, մարտաշարքի հինգերորդ-
գիմնադրի ուսուցիչն և ծառայողն
տանցին պ. Էմինի 33 ամեայ յորեւ-
եանը, որպէս աւագինք, հոկտեմբերի
7ին, այսպէս, նախ՝ ներկայացուցին
նոքա պ. Էմինին խնդակցութեան
թուղթ . ապա նուիրեցին նորան ի յի-
շտակ իւրեանց շերմեանդուութեան
և երախտագիտութեան՝ ճարտարա-
ուեստ արծաթեայ կաղամար, որի վե-
րա դրոշմուած կան պ. Էմինի բոլոր
ծառայակցիները ազգատոհմներն, և
ի վերջոյ ճաշ արին ի պատիւ նորա :
Ճաշի ժամանակ կենաց բաժակն բարձ-
րացուցաւ այն մարդոյ համար, որի
գրականեան երկատիրութիւնն այս-
նի են բաղման և արժանապէս գնա-
հատում են Եւրոպայում : Մատուցուե-
ցաւ նաև արժանի գովասանութիւնն
պ. Էմինի խելքին, անդադրին և բը-
նական ձիրքին, մինչև անգամ որ հա-
ռակաւոր ուսուցիչներից երկուքն խոս-
տովանեցան թէ նորա խրատուց և
ցուցմանց միայն պարտական են ինք-
եանք, որ կարողացան կատարելագոր-
ծելու զիւրեանց դասաւանդութիւնը,
ներկայ ժամանակիս պահանջմանց հա-
մաձայն : Ապա ի օգնութիւնն ի կող-
մանէ տեսչոյ՝ չքնդադրուած բան չէ
արդեօք այս ժամանակուս, եւ յի-
րաւի՝ պ. Էմինի դաստիարակման
յառկութիւնըն յայտնի են մեզ հա-
յերիս շատերին, և կարող եմք հաս-
տատել և վկայել վերոյիշեալ երկու
ծերունի ուսուցիչների խօսքերի ճշ-
մարտութեանը : Թող ուրեմն մեր հա-
յերին չաեսանել զիւրեանց գործունե-
եայ անդամները, թող որ նոքա ու-
նակոխ առնեն և մեռուցանեն մատաղ
գործութիւնքը, իսկ նոցա աեղ օտար
ազգիք նոյն հերքուած և անպէտք
համարուած գործութիւններից օգուտ
քաղեն . . .

Նամակս չեմ կարող չը վերջնել
հետեւեալ խրատական դիպումով,
որ պատահեցաւ նորեւումս : Մայրա-
քաղաքիս պատուելիներից մինք սաս-
նումէ նոր-նախիջեանէն 10րդ թիւ ար-
ծաթ, որ այդ փողով գնէ Մսերեան-
ցի «Հաւատարմութեան» տետրակնե-
րից, և հասուցանէ ի նոյն քաղաքը .
բայց պատուելիս փոխանակ տաւ
բուրի գիրք գնելու, գնումէ միայն
հինգ ու կէս բուրի, և լրատարանում
է փող աւաքողին այսպէս . «Ահա
յուզի արկի զգաւուն հինգ Հաւատա-
րարութեան գիրքս առ այժմ . իսկ մնաց-
եալն ունիք ստանալ յետոյ, ոչ ա-
նագան քան զտաւան հինգ աւուրս .
վաւան զի լուսահոգին վաճառեալ չի-
նելով յաւուրս յայտնի, գրեանք
նորա ոչ են ի կարգի, այլ խառնեալ
են ընդ միմեանս, վաւան որոյ մնալի է
արձակ աւուրս ի վնասիւ մասնել և
գտանել չկամեցեալն :»

Կարծեմ թէ աւելորդ է բոլորո-

վին հերքել բերուած խօսքերի ստու-
թիւնը, քան որում Մսերեանցի գրք-
երն երբեք «խառնեալ» եղած չեն,
և ոչ մի ժամանակ հարկ եղած չէ «աւ-
ձակ աւուրս» որոնել և «ի փնտիւ մը-
տանել և գտանել չկամեցեալն» : Մեր
պատուելիի այսպիսի սուտ հնարեւոյ
միակ նպատակն եղած է՝ ինչպէս երե-
ւում է կուլ աւա մնացած և ր. 30 կո-
պէկը :
Վայ մեզ որ այսպիսի պատուելի-
ների ձեռքում եմք մնացած (1) :

Նոյեմբերի 4 1873
Մայրաքաղ
(Մշակ)

ՆԱՄԱԿ ԲԱՅՈՒՆԻՑ
Շատ անգամ ինձ պատահած է տես-
նել թշուառ տղաներ զանազան քա-
ղաքներում և գիւղերում : Ես նորե-
րումս կրկին ակամապէս եղայ մի
խումբ հայ և քան մեծի մասին թուրք
համարների, որ ժողովուրդ էին մի կողմ
հայ աղի մօտ և լուսւմ էին նորա եր-
գած թուրքերէն երգերը : Ես այս ան-
գամ կամենում եմ մի կարճ խօսք ա-
սելու այս բանի համար :

Մարդը իւր միտքը, պահանջները,
զգացմունքները յայտնում է միւսներ-
ին բառերով : Լաւ և ազդու բառե-
րը զօրացնում են ու ստատագիւցնում
նրանց միտքը-հասկացումն ևս աւելի
դիւրին և աւելի կենդանի կերպով :
Բառերը խառնուած ախուր կամ ու-
րախալի միջնորդութիւններով էլ աւե-
րի կենդանի են շինում յայտնած միտ-
քը : Իսկ բոլոր խօսակցութիւնը բոլոր
զգացմունքները երգի ձայնով արդէն
բոլորովին գերազանցում են իւրեանց
վերին նշանակութեամբ : Նրանք յայա-
նելով մարդու միտքը, վառում են լը-
սողի երեւակայութիւնը, այնպէս որ
վերջինք իսկապէս մտնում է նրա դե-
րի մէջ և բոլորովին գեղեցիկ հասկե-
նում նրան : Այդ քաղցրութիւնը ի-
հարկէ էլ աւելի զօրանում է, երբ բա-
ռերը տաղաչափում են, իսկ երբ
ձայնը ընտրվում է ամենալաւ և ու-
մենահամապատասխանը զգացմանց
արտայայտելուն : Եւ այսպէս երգը ի-
նելով ամենագործաւոր միջոցը խօսակ-
ցութեան, պարունակում է իւր մէջ
այն, ինչ որ ներկայացում է կենսքը,
նրա գլխաւոր և ամենահարկաւոր բա-
հանջները, անձնական ստատիկ զգոյ-
մունքները : Այս է իսկապէս երգի գե-
րազանցութիւնը և այդպէս են ծագել
ժողովրդական երգերից շատերը :

Գրականական երգերը լինելով աւե-
րի արհեստական, չունին այն իսկու-
թիւնը և ճշմարիտ քաղցրութիւնը-սը-
րանք մարդու կատարելութեան շնոր-
քն են միայն : Երգը մարդու անբա-
ժան ընկերն է, միայնակութեան ժա-
մանակ երգած երգը միւսնոյն է եթէ
մի ուրիշ անձնի հետ խօսակցութիւն .
վաւանորդ երգը աւաշնորդութեամբ մար-
դուն նրա ծննդեան օրից մինչև մահը
Ամենայն ազգ ունեցել է կամ ունի եր-
գեր և երգիչներ : Թունաստանը ունի
ապստոսներ, քրիստոնեանք-բարդեր,
Ֆրանսիան (Պրովանսը)-տրուբադուր-
ներ, Հայաստանը իւր երգիչները (2)
Պարսկաստանը-շահներ ևն :

(1) Միլլէթիմիդտէ տըրքար օլան գատր
ու հայսլյայթ թանրամաղլըը, վէ իրթի-
քեսալը, պու մէթուպ տախի թաստիգ
իթմէտէ տիր :

(2) Հայոց հին ժողովրդական երգերը
պատկանում են Գողթան երգիչներին :
Գողթն կոչվում է այժմեան Աղուիսը բայց
աւելի մեծ նշանակութեամբ կոչվում են և նը-

երգիչները այդ պաշտօնը իւրեանց
վերա առնում էին կամ ստատիկ սի-
րուց դէպի երգը-կամ թէ ուրիշներին
համար երգելով, ապահովեցնելու ի-
րանց կենսքը : Իհարկէ իսկական եր-
գիչները-ճշմարիտ սիրողներ էին բա-
նաստեղծութեան . միայն ժամանակ-
ներ անցնելով, երբ ժողովուրդը սկը-
սաւ երգիչներին գովել, վարձատրել
և պատուել, այն ժամանակ երեցուն
անբնական կամ արհեստական երգիչ-
ներ :

Անցնելով հին հապատակաւ դա-
րեր անցան և երգիչները . նրանց հետ
անցան և մարդու հին հայացքները :
Այժմեան ժամանակում մենք չենք
գիտալու լաւի նախկին երգիչներով
որովհետեւ մեր կենսքը փոխուել է,
որովհետեւ մեր հիմքը աւելի մեծ շըր-
ջանի մէջ է մտել, աւելի պահանջներ
է առաջարկում երգչին : Առաջնայ
առաջադրանքներն են նրանց բերա-
նաբաց զմայլեցնում, այսօր մեզ ծի-
ծաղալի, յիմար և մինչև անգամ զըղ-
ուելի կերեայ, որովհետեւ երգի մէջ
բառերն էլ մեծ նշանակութիւն ունին
իսկ նրանք չեն համապատասխանում
մեր զգացմունքներին :

Հայաստանը և Պարսկաստանը դեռ
խանձարուած լինելով հնութեան շո-
րերի մէջ-մինչև այժմ պահել են եր-
գիչներ : Այս՝ երգիչներ, բայց մար-
դիկ, որոնք ամենեւին չեն հասկանում
երգի նշանակութիւնը, հազուայ վերին
զգացմունքները, որոնք միայն նիւ-
թական միջոց են պարտում, որոնք
միայն ապրուստ են խնդրում : Ի հար-
կէ սրտ մէջ էլ, ինչպէս ամենայն ճշ-
մարտութեան մէջ, կան բացառու-
թիւններ . իսկ մենք խօսում ենք ընդ-
հանրաբար, թողնենք Պարսկաստանը
և միւս կողմից քննենք մի կարճ կեր-
պով մեր այժմեան Հայ երգիչներին :

Այժմեան Հայ երգիչը-կաղ, կոյր
կամ մի ուրիշ պակասութիւն ունեցող
անձն է, որ դժուարութեամբ կարող
էր իւր սեպհական ոյժով ապրուստ
ճարել : Նա հայ երգիչ անուանելով
իրան ամենեւին չունի նրա բարձր յա-
կութիւնները, նրա շատ անգամ եր-
դանները լինում են թուրքերէն կամ
պարսկերէն և նա դուրից ի դուրս ման
գաւով, ամէն մի կոպէկի համար եր-
գում է :

Մենք չենք ուզում պախարակել
երգիչների նշանակութիւնը, բայց այժ-
մեան դարերում աւելի բարձր խնդրի-
ների ժամանակ-այդպիսի անպիտան,
անզգայ և անհամ երգիչներ ունեալը
աւելի ամսթանք է հային : Աւելացը-
րու սրան և այն անոտիական նախա-
պաշարմունքները, որոնցով լինէ
աղի գլուխը և որոնց հաղորդում է
իւր խոսքերին, մինչդեռ նա համար-
վում է սրբերից կոչուած ևն. ևն :

Բոլոր Արցախը լինէ այդպիսի
փառած և անզգայ երգիչներով, որոնք
երբեմն սաղը ուսերին ճանապարհոր-
դում են քաղաքներ և ուրտեղ օրըս-
տօրէ պակասում է կամ արդէն պակ-
սած է դէպի նրանց համակրութիւնը
մինչև անգամ ստորին դասից : Բա-
ւական չէ՝ միթէ այժմ հային թողնելու
այդ թուրք-երգչութիւնը . . .

Ամենայն ազգ այժմ էլ ունի երգ,
միայն դա աւելի կանոնաւորած եղա-
րա շրջակայքը : Աղուիսում այժմ էլ եր-
գեցողութիւնը շատ տարածուած է, բայց
այդ երգերը-նոր են յորինուած և եղանա-
կաւորուած :

կանով և աւելի յարմարեցրած այժմ-
եան պահանջներին : Երգը այժմ սո-
վորեցնում են դասի նման զգոյշ օրս-
տեմատիկայով, վասնորոյ ցանկալի
կլինէր մեր հայ մանուկներին էլ կըր-
թել մի և նոյն կանոնաւոր ներդաշ-
նակութեամբ, որովհետեւ երգի նը-
շանակութիւնը կենսքի մէջ, ինչպէս
ասացինք շատ մեծ է : Մանաւանդ
որ այժմեան գիտութիւնը շատ գերա-
զանցութիւն է ընծայում երգերին
մանուկների համար : Նա նրանց սկս-
բնական բարոյական սերմեր է հա-
մարում մանուկների սրտերի մէջ ցա-
նելու համար, իբրեւ մանկավարժա-
կան, հայրենասիրական, և զարգա-
ցողական ամենալաւ միջոցներից մէ-
կը : (1)

1872 9 նոյ. Աշ. Գալանթարեանց
(Բէլա)

Այս տարւոյ առաջին կօնցերտը ե-
րաժշտական ընկերութեան անդամնե-
րի, կը լինի դեկտեմբերի 3ին երկու-
շաբթի օրը, ժամը 8ին երեկոյեան :
Կօնցերտի պրօգրամին նայելով, երե-
ւում է, որ ծանր, կլասիկական և ժա-
մանակակից ամենատաղանդաւոր ե-
րաժիշտների գրվածները, (թէ երգե-
ցողութիւնը և թէ երաժշտութիւնը)
սկսում են մեր հասարակութեան մէջ
էլ մուտք գործել : Ամենաթանկագի-
նը այն է մեզ համար, որ այդ ժամա-
նակակից ուղղութիւն մօցնողները մեր
հայ օրիորդներն են :

Սեպտեմբերի 3ին երաժշտական ըն-
կերութեան մէջ կօնցերտը շատ լաւ
անցաւ : Մենք չենք կարող մեր խո-
րին և անկեղծ շնորհակալութիւն չը
յայտնել մեր հայ օրիորդներին այն
արհեստական վախճանութեան համար
որ նոքա պատճառներին մեզ իրանց
թէ երգեցողութեամբ թէ խաղով :
Երկու Արցախեանց օրիորդների, մի-
նի փոքր, բայց արհեստական կողմից
մաքուր և ճիշտ ձայնը, միւսի հիա-
նալի խաղը պիտանի վրա, թող տու-
եցին մեզ մի քանի լաւ րօպէներ ան-
ցունելու : Օր. Է. Արցախեանցը ա-
ծելով Շուպանի, Ծօպէնի և Վազների
պիեսաները, ծափահարութիւնները ս-
տացաւ մեծ մասամբ ասիացիներից,
հայերից ու վրացիներից, իսկ մեզ
ղարմացրեց որ աւստրերը, որք մեզա-
նից, ասիացիներից առաւել պիտի
զարգարած լինէին արհեստական կող-
մից, ստույգութեամբ ընդունեցին ժա-
մանակակից ամենաբեւեռի գերմա-
նական երաժշտութեան կատարե-
լը : (2)

(Բէլա)

(1) Մուկիդասա դարը սօյլէյէն, վէ
միլլէթիմիդտէ իք տէֆա օլարաք մուպի-
գանըն թէմէլի գոյամադտ օլան Արապեան
վարժարանը թագալի իթմէլտէ պուր-
նան տղէտըր, պու պէնտի տիգալթը
թամմէ իլէ օղուեուպ տա ութանմալը
տըրար :

(2) Պիլ սու հալափաի քէմալի մէմու-
նիյլէթլէ օղուեուպ, չիւնսի բուսիատա
տախի Հայ օրիորդար մուգիգա Կոյրէն-
մէյէ պաշամաղլար, վէ գօնսիթօ տախի
վրալիլէր տիր . բուսիալըար պու պապտէ
չօգ մէմուեու օլմալը տըրար քի, պիգտէ օլ-
տուղու կիպի Հայ Էրապէ դագէթարը
պուրանմաղլըրտան, գօնսիթօլըար փաւ
ու զէմ օլուեմալը տըր :

ՄԱՍԻՆՈՒՄԻ ԷՅԻՄԱՐ
ԳԱՐԱԳԵՑ Ե. ԳԱՆՈՍԵԱՅ
Գալանթար Բէլալի միւր բաղարնեա
Ն. 41 Իրսի խանդաւ